Տես 'ի Գիրս Հ. Մ. Չամչեան. Պատ. Հայ. Հատ. Գ. Երես 53։

Իսկ Թագաւորն Բալտուին, պաշարեաց զԱսկաղոն քաղաք զամ մի ողջոյն, և սաստկացուցեալ զմարտն էառ զայն 'ի ձեռաց այլազգեաց նիզակակցութեամբ տաճարական ասպետաց. զոմանս կոտորելով և զայլս արտաքսելով 'ի քաղաքէ անտի, ելից քրիստոնէիւք, և կանգնեաց զՍ. Խաչն 'ի վերայ պարսպաց նորին (1153. 'ի 15 Օգոստոսի), յաւուր տօնի փոխման Ս. Կուսին։ Եւ ուղղեաց զարշաւանս իւր 'ի Դամասկոս, էառ զԿեսարիա Փիլիպպեայ և նորոգեաց զնա. զի յառաջագոյն Սուլթանն Բերիոյ և Դամասկոսի առեալ զայն 'ի ձեռաց Լատինաց՝ 'ի հուր դատեալ էր բաց յամրոցէն։ Սակայն սրտմտեալ Նուրէտտինայ վերըստին էառ զայն 'ի ձեռաց նոցա յաւուրս Ամաւրի Թագաւորին, և խայտառ եղծեալ ապականեաց զնա, եւ այլ ոչ եւս յաւել կանգնել յաւերակաց իւրոց։

Բալտուին Գ. վարեալ զիշխանութիւն թագաւորութեան ամս 20. մեռաւ (1160)։

ԳԼՈՒԽ ԺԹ.

Արշաւանք Ամաւրիայ։ Շիրքու և Սալահատտին։ Բարձումն իշխանութեան Ֆաթիմեանց։ Նորոգութիւն եկեղեցւոյն Բեթղեհէմի։ Թագուհի Մանուէլի կայսեր. Մահ Նուրէտտինայ և Ամաւրեայ. Մեծութիւն Սալահատտինի։

Յետ մահուան Բալտուինի Գ. թագաւորեաց յԵրուսաղէմ եղբայր նորին Ամաւրի կամ Ալմերիկոս (1162)։ Եւ զի նախորդք իւր՝ որք բացեալ էին ճանապարհ արշաւել 'ի սահմանս Եգիպտոսի, սա առաւել եւս ընդարձակեաց զայն, հարկատու կացուցեալ զայլազգիսն Եգիպտոսի եւ յարձակեալ 'ի վերայ նոցա 'ի Նեղ արկ զԽալիֆայն եւ բռնութեամբ տիրեաց Պլպէս քաղաքի, աւարի էառ զինչս նորա, եւ զբազումս 'ի բնակչացն կոտորեաց, և զայլսն վարեաց 'ի գերութիւն։ Եւ յարուցեալ անտի էջ 'ի վերայ Գահիրէ քաղաքի և պաշարեաց զնա։ Իսկ Շավէր,